

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱԾԵԱՆԻ «ԻՆԴԻԱՆԱ» ՕՊԵՐԱՅԻ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ

Տ. Չուխաճեանի կեանքի եւ ստեղծագործութեան առեղծուածներից է «Ինդիանա» օպերան: Մինչ օրս չուխաճեանագիտութեան մէջ դեռեւս վերջնականապէս յստակեցուած չէ այս ստեղծագործութեան տեղն ու դերը թէ՛ կոմպոզիտորի ժառանգութեան, թէ՛ հայ երաժշտական թատրոնի պատմութեան մէջ:

1914-ին Կ. Պոլսում լոյս է տեսնում Շարասանի «Թրքահայ բեմը եւ իր գործիչները» աշխատութիւնը, որտեղ հեղինակը գրում է. «Չուխաճեանի վերջին գործը՝ Զեմիրէ, դիցարանական գուսաներգութիւն մը, որ առաջին անգամ ներկայացուեցաւ 1891ին Բերա, Քոնստանտինոպոլի մէջ Պենդոկիի ֆրանս. խումբին կողմէ, երկրորդ ներկայացումը տրուեցաւ Ֆրանսիայի իտալ. խումբով 1894ին, Ֆրանսական Նոր քատրոնին մէջ»¹:

12 տարի անց՝ 1926-ին, Վենետիկում լոյս տեսած Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյցում» Նուպար Ալեքսանեանը նոյնպէս «Զեմիրէն» համարում է կոմպոզիտորի ստեղծած վերջին օպերան. ««Զեմիրէ» դիւքախաղն իր կարապի երգն եղաւ»²:

1941-ին Կ. Պոլսում լոյս տեսած իր յօդուածում ռեժիսոր եւ թատերական գործիչ Աշոտ Մադաթեանը հաւաստում է. «Չուխաճեանի վերջին գործը «Ինդիանա» օպերան է: Այս գործը տակաւին ներկայացուած չէ եւ կը մնայ իսթանպուլ՝ պ. Արամ Մելիքեանի բով»³:

¹ ՇԱՐԱՍԱՆ, Թրքահայ բեմը եւ իր գործիչները (1850-1908), Պոլիս, տպարան Արաքս, 1914, էջ 48:

² Ա.Լ.ԲՍԱՆԵԱՆ Ն., Տիգրան Չուխաճեան. իր կեանքն ու արուեստը, Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, Վենետիկ, 1926, էջ 457:

³ ՄՏԵՓԱՆԵԱՆ Գ., Տ. Չուխաճեանի մի անյայտ օպերայի մասին, Երեւան, «Սովետական արուեստ», 1957, N 2, փետրուար, էջ 49:

Հինգ տարի անց Կ. Պոլսում լոյս տեսած «Անիւ» պարբերականի 1946-ի N 2-ում Չուխաճեանին նուիրուած իր յօդուածաշարում Ա. Մաղաթեանը գրում է. «1897-ին գրեց «Ինդիանա» օպերան, որ իր վերջին գործը եղաւ, եւ մէկ քանի ոսկիի փոխարէն Մելիքեանին բոլ աւանդ քողելէ յետոյ գնաց Իզմիր»⁴, իսկ N 4-ում մանրամասներ հաղորդում օպերայի ստեղծման մասին. «Չուխաճեան այս օպերան եղանակաւորել է՝ ներշնչուելով Արդիւիակ Համիդի «Հնդկուհին» անուն վերքուածական քատերախաղէն: Այս տեղեկութիւնը ստացել եմ դերասանապետ Մնակեանէն: Չուխաճեան իր այս կարապի երգը մէկ քանի ոսկիի փոխարէն աւանդ ձգելով եզիագար Մելիքեանին՝ գացած է Իզմիր: Ըստ Արամ Մելիքեանի՝ ««Ինդիանան» Չուխաճեանի ամենէն գեղարուեստական եւ անքննադատելի գործն է, որ մինչեւ այսօր կը մնայ անոր մօտ: Շատ փափագելի է, որ մեր գեղարուեստաւոր հարուստներէն մին գնահատելի ելոյթով մը գոհացում տար Արամ Մելիքեանին եւ մուրթէն լուսին մէջ դնէր այդ գեղեցիկ գործը»⁵:

1955-ին Թուրք երաժշտագէտ Օսման Նահիդը Չուխաճեանի մասին իր յօդուածում գրում է. «Չուխաճեանի շատ մը ստեղծագործութիւններէն կարելորներն են «Արուս»⁶, «Օլիմպիա» օպերաները, «Արիֆին Հիլլէսի», «Քէօսէ Քեհեա» օպերետները, «Լեպլեպիջի» օպերա-կոմիք եւ «Զեմիրէ», «Ինդիանա»»⁷:

1957-ին Գ. Ստեփանեանը խորհրդահայ չուխաճեանագիտութեան մէջ առաջին անգամ յիշատակում է «Խնդիանա» օպերայի գոյութեան փաստը: «Տ. Չուխաճեանի մի անյայտ օպերայի մասին» յօդուածում 1957-ին նա գրում է. «Որքան ցանկալի կը լինէր գտնել եւ հասարակութեան սեփականութիւն դարձնել հայ երաժշտական կլասիկ արուեստի նաեւ այդ կարելոր նըմոյշը»⁸: Գ. Ստեփանեանի նուիրական ցանկութիւնն իրականութիւն է դառնում 15 տարի անց, երբ Սիրվարդ Գարամանուկեան

4 Նոյն տեղում:

5 Նոյն տեղում, էջ 49-50:

6 Նոյն ինքը՝ «Արշակ Բ»:

7 Ստեփանեան Գ., Տ. Չուխաճեանի մի անյայտ օպերայի մասին, էջ 49:

8 Նոյն տեղում, էջ 50:

նի⁹ ջանքերով «Ինդիանայի» ձեռագիրը վերջնականապես հանգրվանում է Երեւանի Ե. Զարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի Տ. Զուխանեանի դիւանում:

1972-ի տարեկգրին Երեւանի կոմիտասի անուան պետական կոնսերւատորիայի դասախօս, երաժշտագէտ Մանուկ Դաւթեանն այցելում է Ստամբուլ եւ հանդիպում Ս. Գարամանուկեանի հետ: 1972-ի յուլիսի 27-ին Երեւանի Գրականութեան եւ արուեստի թանգարանի գիրեկտոր, թատերագէտ, արուեստագիտութեան դոկտոր Սարգիս Մելիքսէթեանին ուղղուած նամակում¹⁰ Ս. Գարամանուկեանը գրում է. «Դաւթեան տեղեկացաւ ուրիշ իրողութեան մը թէ Տիգրան Զուխանեանի վերջին գործը «Ինտիանա» Օրերա-ֆոմիքը ամբողջութեամբ ի պահ կը մընայ իմ ֆոլ. Դաւթեան շատ խանդավառութեամբ եւ ամէն գնով ուզեց ինձ անձամբ փոխադրել այս քանկագին ձեռագիրը, բայց ես աւելի ապահով նկատեցի Բարիգի ճամբով ուղարկել գանոնք: Վերջերս երեւանէ Մ. Դաւթեանէ ստացայ նամակ մը որով կը տեղեկացնէր թէ «Ինտիանա»-յի ձեռագիրները Բարիգի Առաջնորդ Սերովրէ Արք. Մանուկեան անձամբ փոխադրած է երեւան եւ յանձնած վեհափառ Հայրապետի պատշաճը տնօրինելու դիտումով: Ներկայիս Բարիգ գտնուելով այցելեցի Մանուկեան Սրբազանին տեղեկանալու համար ու՞ր եղած է ձեռագիրներու վերջին հանգրուանը: Սրբազանը շատ ուրախ եղաւ գիտակցելով խնդրին էութեան եւ գնատահեց գիս այդ արժէքաւոր ձեռագիրները երեւան հանած եւ անոնց ապահով հայրենիք փոխադրութիւնը յաջողացուցած ըլլալուս համար»¹¹: Գարամանուկեանի նամակի յետագայ շարադրանքը կարեւոր տեղեկութիւններ է պարունակում «Ինդիանայի» ձեռագրերի վերաբերեալ: «Խաթանալուի մէջ, Վոսփորի եւրոպական

⁹ Սիրվարդ Գարամանուկեան, - ստամբուլահայ կոմպոզիտոր, դաշնակահարուհի, խմբավար, հասարակական գործիչ: Հեղինակել է դաշնամուրային ստեղծագործութիւններ, մեներգեր, խմբերգեր, «Վաղուայ արուեստագէտներ» պատանեկան օպերետը (Գարամանուկեանի մասին տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ Զ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընծիւղները, Երեւան, 1996, էջ 38):

¹⁰ Ս. Գարամանուկեանի՝ «Ինդիանայի» ձեռագրերի մասին արժէքաւոր տեղեկութիւններ պարունակող նամակը չբնականութեան մէջ է գրւում առաջին անգամ:

¹¹ Ս. Գարամանուկեանի նամակը, ԳԱԹ, Տ. Զուխանեանի դիւան:

ափումնի՜ն կայ Ռումէլի հիսար գիւղը ուր կը բնակէր Տիկ. Սոֆի Կիւլոյեան եւ իր աղջիկը Ֆելօմէն. Տիկ. Սոֆի (65-66 տարեկան) հոգեկան հիւանդ էր եւ խեղճ: Գանատա մեկնող իր որդւոյն կարօտով կը տուայտէր: Իմ ընտանիքիս գիւղագր-նացութեան վայրը ըլլալով Ռումէլի հիսար՝ մտերմացայ Կիւլոյեաններու հետ: Միջոց մը վերջ տեղեկացայ որ մէկ տարէ ի վեր իրենց բոլ ի պահ կը մնայ Տիգրան Զուխանեանի կարգ մը ձեռագիրները: Յիշեալ Տիկիներ թոռն է մեծահա-րուստ պրն. Նդիագար Մելիքեանի որ 1871-72 թուականներուն Զուխանեանի ողջութեան եւ նիւթական անձուկ օրերուն՝ գը-նած է իր չորս օրերաներուն ձեռագիրները: Զուխանեան որ այդ շրջանին հիւանդ ալ էր, այդ դրամով մեկնած է Բարիզ իր ազգականներուն մօտ՝ անցընելու իր վերջին օրերը: Թուա-կանէս եօթը ութը տարի առաջ Պէյրութէն Տիգրան անուն մէ-կը ներկայացած է իրենց Զուխանեանի բոլոր ձեռագիրները գնելու մտադրութեամբ: Տիգրանին ընկերակցող Աշոտ Մադա-թեան (պոլսահայ ականաւոր դերասան եւ դերուսոյց) թելա-դրած է միւսներուն կարգին չժախել «Ինտիանա»յի ձեռագիր-ները մատնանշելով որ երբեք ընդօրինակած չէ եւ հետեւա-բար չէ ներկայացուած տակաւին ոչ մի տեղ: Արդ՝ Տիկ. Սոֆի իր անձուկ վիճակին դարման մը ըլլալու մտով կը խորհէր ծախու հանել գայն: Իբրեւ ընտանիքին քարեկամ նախ ինծի յայտնեց այդ գաղափարը միշտ վախճալով որ մի գուցէ նա-րպիկ անձեր կրնային իր ձեռքէն կորզել գայն ածան գնով: Խորհեցայ թէ առանց տարաձայնութեան յարմար պիտի ըլլար մեր ընտանեկան շրջանակէն հայթ-այթել որոշուած գումարը եւ նոյնպէս առանց տարաձայնութեան գանձի՞ դնել հայրենիք առաջնորդող ապահով նամբու մը մէջ: Այս նկատաւորմով քարեկամ անձերու միջոցաւ Բարիզ փոխադրուեցաւ ամբողջա-կան գործը եւ յանձնուեցաւ Սերովքէ Սրբ. Մանուկեանի: Այ-ժըմ երջանիկ եմ որ գրեթէ տարի մը առաջ սկսուած գործ մը իր վերջին հանգրուանին հասած է ապահով եւ յանձնուած է Նրեւանի մշակոյթի եւ արուեստի թանգարանին ...»¹²:

Շուտով «Գարուն» ամսագրի խմբագրութեան խնդրանքով Զուխանեանի նորաշայտ օպերայի մասին 1977-ին ուսումնասի-րութիւններ են կատարում Գ. Ստեփանեանն ու Մ. Մուրա-դեանը: Ըստ Գ. Ստեփանեանի՝ «Զուխանեանը «Ինդիանան» գրել

¹² Նոյն տեղում:

է 1896 կամ 1897 թթ.: Մահացել է մէկ տարի անց»¹³: «Ինդիանայի» կլաւիրի մասին Մ. Մուրադեանը գրում է՝ «Մի քան պարզ է, որ «Ինդիանան» պատկանում է Չուխաջեանին: Այդ եւս վկայում ոչ միայն քանադական տուեալները, այլեւ օպերայի լեգուա-ոմական երաժշտական ընդհանրութիւնները Չուխաջեանի նախորդ քեմական ստեղծագործութիւնների հետ»¹⁴:

Անհատականաւ ի, թէ ի՞նչն է պատճառը, որ դրանից յետոյ, աւելի քան երեք տասնամեակ շարունակ հայրենական երաժշտագիտութեան մէջ Չուխաջեանին նուիրուած ուսումնասիրութիւններում, յօդուածներում եւ հրապարակումներում հետեւողականօրէն անտեսուել է «Ինդիանան», չընկնուել նրա գոյութեան փաստը:

Մեզ համար կասկածից վեր է, որ «Ինդիանան» Չուխաջեանի ստեղծագործութիւնն է, եւ դրա հիմնաւորման կարիքն առանձնապէս չկայ: «Ինդիանայի» հետ կապուած մեր նկատառումները վերաբերում են ամէնից առաջ օպերայի ստեղծման ժամանակաշրջանին: Օպերայի՝ Չուխաջեանի գրչին պատկանելու փաստն ընդունողները գտնում են, որ այն ստեղծուել է 1896-97-ին: «Ըստ աղբիւրների, Տ. Չուխաջեանը «Զեմիրէից» յետոյ, 1897-ին գրել է «Ինդիանա» օպերան՝ թուրք գրող Արդիւհակ Համիդի «Հնդկուհին» երկի հիման վրայ: Ասում է նաեւ, թէ այդ գործի ձեռագիրը Չուխաջեանն իր միւս օպերաների հետ գրաւ է դրել Եղիազար Մելիքեանի մօտ, մեկնել Իզմիր, որտեղ էլ վախճանուել է կարճ ժամանակից, թէ «Ինդիանան» յետագայում պահուել է Եղիազարի որդու՝ Արամ Մելիքեանի մօտ»¹⁵: Ստեփանեանը շարունակում է. «Նա (Չուխաջեանը - Ա.Ա.) իր քոյր ձեռագրերը, նաեւ միակ հարստութիւնը հանդիսացող ժամացոյցը գրաւ դնելով է. Մելիքեանի մօտ, նրանից վերցնում է անհրաժեշտ գումարը եւ մեկնում Իզմիր, որտեղ էլ վախճանուում է կարճ ժամանակից»¹⁶: Ըստ Մաղաթեանի՝ «Ինդիանան» կոմպոզիտորը գրել է 1897-ին, մի քանի ոսկով գլորաւ գրել Մելիքեանի մօտ ու մեկնել Իզմիր: «Կոմպոզիտորը այն («Ինդիանան» - Ա.Ա.) աւարտել է 1897 թուին, իր մահից ըն-

¹³ Տե՛ս ՍՏԵՓԱՆԵԱՆ Գ., Տիգրան Չուխաջեանի նորայայտ օպերան, էջ 26-30:

¹⁴ Տե՛ս ՄՈՒՐԱԴԵԱՆ Մ., «Ինդիանա» օպերայի կլաւիրի մասին, *Երեւան, «Գարուն», 1977, N 4, էջ 30-32*:

¹⁵ ՍՏԵՓԱՆԵԱՆ Գ., Տիգրան Չուխաջեանի նորայայտ օպերան, էջ 26:

¹⁶ Նոյն տեղում, էջ 28:

դամենը մէկ տարի առաջ եւ ակամատես չի եղել իր օպերայի քեմադրութեանը»¹⁷, - *ահաւասիկ Մ. Մուրադեանի տեսակէտը*:

Մեր կարծիքով՝ Զուխանեանն «Ինդիանան» գրել է ոչ թէ մահից մէկ-երկու տարի առաջ, այլ 1870-ականների երկրորդ կէսին: Ահաւասիկ մեր վարկածի կռուանները:

Ա. Յայտնի է, որ Զուխանեանը Կ. Պոլսից տեղափոխուեց Զմիւռնիա 1896-ին: Իր ողջ կեանքը Պոլսում անցկացրած ու փառքի հասած կոմպոզիտորի համար նման որոշման զրգապատճառը ՀՅԴ ձեռնարկած՝ Բանկ Օտոմանի գրաւումն էր 1896-ի օգոստոսի 14-ին, որն առաջ բերեց թուրքական հայատեաց զեկավարութեան վայրագութիւնների հերթական ալիքը: Յարմար առիթ էր ներկայացել արիւնարբու սուլթանին, եւ նա նոր մոլեգնութեամբ ձեռնամուխ եղաւ իր հայաջինջ ծրագրերի իրագործմանը. «Գազազած սուլթանը (նոյն ինքը Աբդուլ Համիդ) հրամայում է արեան մէջ խեղդել հայութեան ձայնը: Երեւ օր ու գիշեր իրենց սեւ գործն են կատարում զինուած ամբոխն ու խուժանը, զինուորական յատուկ ջոկատներն ու ոստիկանական խմբերը, քաղաքի քրեական յանցագործներն ու մասնագիտացած մարդասպանները եւ առհասարակ հասարակութեան ամէն տեսակի քափօնները: Զոհուում են տասնեակ հազարաւոր անմեղ հայ քաղաքացիներ»¹⁸: Պոլսում արուեստի աշխարհը վերածուում է անբախտների կոյտի, մանաւանդ հայ իրականութեան շրջակայներում»¹⁹: Յետագայում Սմբատ Քէսէճեանը կը գրի. «1896 Օգոստոս 16-ին պատահած ջարդին օրը Բերայի մեծ փողոցին վրայ Variété քատրոնին առջեւ՝ եղ-

¹⁷ ՄՈՒՐԱՏԵԱՆ Մ., Ուրուագիծ արեւմտահայ երաժշտութեան պատմութեան, Երեւան, 1989, էջ 165:

¹⁸ Անմեղ զոհերի թիւում էր նաեւ Նիկոլ Գալանդեբեանի հայրը, որի ողբերգական մահը շրջադարձային նշանակութիւն ունեցաւ Նիկոլի յետագայ ճակատագրի համար: Հայ բնակչութեան զանգուածային կոտորածներն ընդգրկեցին նաեւ միւս քաղաքները. 1896-ի սեպտեմբերի 7-ին Նիկոլի ծննդեան 15-ամեակը «նշանաւորուեց» Ակնի ջարդով (տե՛ս ԱՍԱՏՐԵԱՆ Ա., Հայ երաժշտութեան նուիրեալը. Նիկոլ Գալանդեբեան (ծննդեան 125-ամեակի առթիւ), Գիտութեան աշխարհում, Երեւան, 2006, N 1, էջ 10: Նիկոլ. ԳԱՆԴԵՐԵԱՆ, Դու նորից եկել ես, Երգեր, իմ քննակնազգորութիւն, Երեւան, 1999, էջ 7-9):

¹⁹ ԹԱՀՄԻՋԵԱՆ Ն., Տիգրան Զուխանեան. կեանքը եւ Ստեղծագործութիւնը, Փաստեմա, 1999, էջ 77:

բայրս նդիա Բէսէնեան, իտալական խումբին baryton Տաննէլիի հետ մահատակուեցան թուրք խութանի ձեռքով, Rigoletto-ի փորձէն տուն վերադառնալունս պահուն, եւ ես հրաշքով ազատեցայ: Մնակեան ջարդէն տասը օր յետոյ՝ իր որդւոյն Արամ՝ Մնակեանի հետ Բերա եկաւ. խորհրդակցելով անոնց հետ որոշեցինք խումբով Իզմիր երթալ, եւ արդէն հինգ օր յետոյ Պոլսէն նամբայ ելնելով՝ Իզմիր հասանք. մեզ կ'ընկերանար Մաւսք-թօ Զուխանեան իր ընտանիքով: Նոյնպէս թէ ես եւ թէ բոլոր խումբի անդամները՝ մեր ընտանիքներու բոլոր անդամներով էր որ կը մեկէինք Պոլսէն չվերադառնալու պայմանաւ»²⁰:

Այսինքն՝ Կ. Պոլսից հեռանալով 1896-ի օգոստոսի վերջին, Զուխանեանը չէր կարող «Ինդիանան» գրել ու գրաւ զնեւ Մելիքեանի մօտ 1897-ին:

Բ. Նշուում է, որ Զուխանեանը գրաւ է գրել իր բոլոր օպերաները, մինչդեռ «Զեմիրէն» այս ցուցակում բացակայում է: Տրամաբանական է, որ կոմպոզիտորը միւսաների հետ Մելիքեանի մօտ գրաւ կը գնէր նաեւ «Զեմիրէն», եթէ այն արդէն ստեղծուած լինէր:

Գ. Ս. Գարամանուկեանի նամակում նշուում է, որ կոմպոզիտորն օպերաները գրաւ է գրել 1870-ականներին:

Դ. Ս. Գարամանուկեանը նկատում է, որ օպերայի «ոնը շատ մօտ է «Լէպլէպիի հօրհօր»ի ոնին»: Մեր կարծիքով աւելի ճիշտ կը լինէր ասել՝ առհասարակ կոմիկական օպերաների ոճին. Զուխանեանը իր չորս գործողութեամբ «Զեմիրէից» յետոյ կրկին վերադառնում է երեք գործողութեամբ կոմիկական օպերաներին:

Ե. Եւ, մեր կարծիքով, ամենակարեւոր հանգամանքը. եթէ «Ինդիանան» ստեղծուել է 1896-97-ին, ապա ինչու՞ է օպերայի ձեռագիր պարտիտուրի ախտղոսաթերթին գրուած «1876»:

Եւ այսպէս, Զուխանեանի «Ինդիանա» օպերան գրուած է ըստ Արդիւլհակ Համիդի²¹ «Հնդկուհին» ստեղծագործութեան: Լիր-

²⁰ Սմբատ Բէսէնեան՝ Զուխանեանի մասին, *Ծիծեռնակ, եռամսեայ երաժշտական լաւերուած Զահակի չարաթաթերթի*, Զ. տարի, թիւ 2-3 (22-23), Ապրիլ-Յուլիս 2006, Կահիրէ, էջ 77:

²¹ Թուրք գրականութեան յայտնի դէմքերից մէկի՝ Արդիւլհակ Համիդի մասին տե՛ս ՍՏԵՓԱՆԵԱՆ Գ., Տիգրան Զուխանեանի նորայայտ օպերան, էջ 28-29:

րեառն կազմել է Կիպրոսի Ֆրանսիական Հիւպատոսարանի թարգման եւ Փրանսագէտ Եօգէֆ (Յովսէփ) Էսզըճեանը²²։ Ի դէպ լիբրետիստի անունը տեղ չի գտել նաեւ «Ինդիանային» անդրադարձած միակ երաժշտագէտ Մ. Մուրադեանի ուսումնասիրութեան մէջ։ Առհասարակ՝ նրա մասին յիշատակում ենք առաջին անգամ։

«Ինդիանա» օպերայի ոչ մի թատերատետր, ցաւօք, մեզ չի հասել։ Երեւանի Ե. Չաբենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում պահուող՝ Տ. Չուխաճեանի դիւանում կայ «Ինդիանա» օպերայի ձեռագիր I ձայնատետր, I կլաւիր եւ գործիքային նուագամասեր։ Դրանք են՝

N 30, ձայնատետր, I գործողութիւն, պարունակում է ձեռագիր 121 թերթ։

N 31, ձայնատետր, II գործողութիւն, պարունակում է ձեռագիր 100 թերթ։

N 32, ձայնատետր, III գործողութիւն, պարունակում է ձեռագիր 99 թերթ։

N 33, կլաւիր, I գործողութիւն, պարունակում է ձեռագիր 60 թերթ։

N 34, կլաւիր, II գործողութիւն, պարունակում է ձեռագիր 52 թերթ։

N 35, կլաւիր, III գործողութիւն, պարունակում է ձեռագիր 49 թերթ։

N 36-48, գործիքային պարտիաներ, Տետր N 1-10, Տետր N 12-15։

«Ինդիանայի»՝ հրաշքով պահպանուած եւ մեզ հասած ձեռագիր պարտիտուրը եւ կլաւիրն ուսումնասիրողի առջեւ լուրջ պրոբլեմներ են դնում, քանի որ բառային տեքստը լատինատառ, Ֆրանսագիր թուրքերէն է։ Ուստի անհրաժեշտութիւն առաջացաւ թարգմանելու եւ իր կենսագրութեան ընթացքում առաջին անգամ հայացնելու օպերան, ինչն իրականացրեց բանաստեղծուհի Անահիտ Պօղիկեան-Դարբինեանը։ Նրա շնորհիւ ոչ միայն հնարաւոր դարձաւ օպերայի ուսումնասիրութիւնը, այլեւ լուրջ նախադրեալներ ստեղծուեցին հայերին հայերէն լեզուով դրա բեմադրութեան համար։

²² Տե՛ս «Ինդիանայի» ձեռագիր կլաւիրի երկրորդ գործողութեան տիտղոսութիւնը։

Մինչ օրս «Ինդիանան» չի ուսումնասիրուել, եթէ ի նկատի չառնենք Մ. Մուրադեանի թուուցիկ անդրադարձն օպերային: Երաժշտական չուխաճեանագիտութեան մէջ հետեւողականօրէն լուծութեան է մատնուել օպերայի գոյութեան փաստն իսկ: Ուստի փորձենք լրացնել երաժշտական չուխաճեանագիտութեան մէջ առկայ այդ բացը:

Մ. Մուրադեանն իր «Ուրուագիծ արեւմտահայ երաժշտութեան պատմութեան» աշխատութեան մէջ շարադրելով «Ինդիանայի» համառօտ բովանդակութիւնը՝ գրում է. «Երիտասարդ վարուցան եւ Միքայէն փոխադարձաբար սիրում են, իսկ վարուցայի մայրը՝ Վահիւուն հաւանել է մի այլ մարդու՝ Նաթանին, որը թէւ մեծ է աղջկանից, բայց հարուստ է եւ կառող է ապահովել իր աղջկայ կեանքը»²³:

Սակայն ըստ մեր ուսումնասիրութեան՝ իրականութիւնը բոլորովին այլ է:

Վարունա-Միքայէ գոյգում, ըստ Մուրադեանի, աղջիկը վարունան է, մինչդեռ իրականում օպերայի գլխաւոր հերոսուհին ոչ թէ վարունան է, այլ Միքայէն:

Վահիւուն Վարունայի մայրը չէ, աւելին՝ առհասարակ նա կին հերոս չէ թէկուզ այն պատճառով, որ նրա երգամասը ծաւալում է բասի բանալիում:

Վարունան ամենեւին էլ երիտասարդ չէ, նա գլխաւոր հերոսուհու՝ Միքայէի հայրն է, այսինքն՝ վարունան եւ Միքայէն ոչ թէ սիրահարներ են, այլ հայր եւ դուստր: Դրանում համոզուելու համար պէտք է ընդամէնը տեսնել, թէ ինչպէս երրորդ գործողութեան N 12-ի սկզբում Միքայէի «Հայր իմ, շատ ուրախացայ» ռեպլիկին պատասխանում է վարունան: Նոյն տեսարանում վարունան զիմում է Միքայէին «Իմ դուստր» խօսքերով:

Իրականում Միքայէի սիրած երիտասարդն օպերայում Բագաւենն է, որի մասին Մուրադեանի մօտ որեւէ յիշատակութիւն չկայ. հէնց նա է մեկնում մարտի եւ փրկում հայրենիքը, մինչդեռ ըստ Մուրադեանի «Միքայէն, իր ընկերների հետ միասին, նուիրուած է հայրենիքի փրկութեան գործին եւ նրանց յաջողւում է կանխել վերահաս վտանգը: Իրադարձութիւնների յետագայ զարգացումը յանգեցնում է այն բանին, որ մայրը հա-

²³ ՄՈՒՐԱԴԵԱՆ Մ., Ուրուագիծ արեւմտահայ երաժշտութեան պատմութեան, էջ 165:

մաճայնում է երիտասարդների ամուսնութեանը, որոնք ուրախ են ու երջանիկ, որ իրենց հայրենիքն ազատագրուել է եւ իրենց էլ հասել են իրենց փափագին»²⁴: *Իսկապէս օպերայի վերջում երիտասարդներն ամուսնանում են, բայց ամուսնանում են ոչ թէ Միքայէն ու Վարունան, այլ՝ Միքայէն եւ Բագաւենը: Ինչ վերաբերում է Հերոսուհու մօրը, ապա նրա կերպարն օպերայում առհասարակ բացակայում է. «Ինդիանայի» միակ կին գործող անձը Միքայէն է, մնացած բոլորը տղամարդիկ են:*

Մ. Մուրադեանը գրում է. «օպերայի տեխստի մէջ տեղ են տրուել նոյնիսկ քաղաքական լոգունգների (կեցցե՛ւ սուլթանը», «փա՛ռֆ սուլթանին» եւ այլն, որոնք հակասում են հնդկական քովանդակութեանը)»²⁵: Մինչդեռ օպերայում նման արտայայտութիւնների մենք չենք հանդիպել. այստեղ փառաբանւում է ոչ թէ սուլթանը, այլ՝ առաջին հերթին հայրենիքը»²⁶, ինչպէս նաեւ արքան եւ ժողովուրդը²⁷, Ռաջան²⁸:

Օպերայի ժանրային պատկանելութեան վերաբերեալ երաժշտական չուխանճեանագիտութեանը ցայսօր յայտնի միակ կարծիքը Մ. Մուրադեանինն է. ««Ինդիանայի» նախնական օրինակըն, ըստ երեւոյթին, ունեցել է լուրջ քովանդակութիւն, եղել է հայրենասիրական բնոյթի եւ դրա հետ սերտօրէն միահիւսուած է գլխաւոր հերոսների՝ Միքայէի եւ Վարունայի անխարդախ սիրոյ բնարական գիծը: Այստեղ օպերետային քե-

²⁴ Նոյն տեղում, էջ 165-166:

²⁵ Տե՛ս ՄՈՒՐԱՒԵԱՆ Մ., «Ինդիանա» օպերայի կլաւրի մասին, էջ 31:

²⁶ Տե՛ս առաջին գործողութեան N 5 ֆինալի եզրափակիչ խմբերգը. «Թող փառաբանուի հայրենիքը...», կամ երկրորդ գործողութեան N 10 ֆինալի եզրափակիչ խմբերգը. «Հայրենիքին երջանկութիւն խնդրենք, խնդրենք...» կամ երրորդ գործողութեան N 15 ֆինալի եզրափակիչ խմբերգը. «Մեր կեանքը մատաղ կ'անենք մեր երկրին, արիւնը կը տանք մեր հայրենիքին»:

²⁷ Տե՛ս առաջին գործողութեան N 5 ֆինալի եզրափակիչ խմբերգը. «Թող կեցցեն արքան եւ ժողովուրդը, կեցցե՛ւ արքան, կեցցե՛ւ արքան» կամ երրորդ գործողութեան N 15 ֆինալի եզրափակիչ խմբերգը. «Կեցցեն՝ ժողովուրդը եւ արքան»:

²⁸ Տե՛ս երկրորդ գործողութեան N 10 ֆինալի եզրափակիչ խմբերգը. «Ռաջային հզօրութիւն խնդրենք, խնդրենք, խնդրենք» կամ երրորդ գործողութեան N 15 ֆինալի եզրափակիչ խմբերգը. «Մեր Ռաջա, դահգ անասան լինի, իշխանութիւնդ թող յարատեւի, յաջողութիւնը միշտ քեզ ուղեկցի, երկիրը թող քեզ յար փառաբանի»:

թեև վարժ ու քարվի համար տեղ չկայ»²⁹։ Եւ իսկապէս՝ «Ինդիանան» հայրենասիրական օպերա է՝ լիբրետոյում թեւածուած է հայրենասիրութեան գաղափարը, հայրենիքի ազատութեան եւ անկախութեան գաղափարն անցնում է ողջ օպերայի միջով, հայրենասիրութեամբ է շնչում երաժշտական կտաւի իւրաքանչիւր էջ։ Ըստ էութեան՝ պատմաոճմանտիկական «Արշակից» եւ կոմիկական տրիագայից՝ «Արիֆից», «Քէօսէ Քեհեայից» եւ «Լեւրեւրիջից» յետոյ Զուխաճեանը հանդէս է գալիս օպերային նոր ժանրում՝ ստեղծելով իր անդրանիկ միակ հայրենասիրական օպերան։ Եւ բնական էր, որ թուրքական մուսլ իրականութեան պայմաններում կոմպոզիտորը հայրենասիրական միակ խոշոր կտաւի օրս-ում պիտի պատմէր ոչ թէ ի՞նչ հայրենիքի ու ժողովրդի, այլ՝ հեռաւոր Հնդկաստանի ու անծանօթ հնդիկների մասին՝ նրանց նուիրական իղձերը նոյնացնելով իր եւ իր հայրենակիցների համար թանկ ու նուիրական հայրենիքի մասին երազանքների հետ։

«Ինդիանան» Տ. Զուխաճեանի դերիւտն էր հայրենասիրական օպերայի ժանրում, որի մասին ոչ ոք այդպէս էլ չիմացաւ։ Դերիւտն անցաւ աննկատ՝ հեղինակին մատուցելով դառնագին ապրումների հերթական չափաբաժինը։

Օպերան առանձնանում է կոմպոզիտորի երաժշտական թատրոնում իր ճակատագրով։ Ի տարբերութիւն միւս օպերաների, «Ինդիանան» երբեք բեմ չբարձրացաւ ո՛չ հեղինակի կեանքի օրօք, ո՛չ նրա մահից յետոյ, ո՛չ հեղինակային մտայն-դացմամբ եւ ո՛չ էլ խմբագրուած ձեւով։ Աւելին՝ ի տարբերութիւն իր նախորդների եւ «Զեմիրէի», որոնց գոյութեան փաստը գոնէ յայտնի է, թէեւ երաժշտութիւնն՝ անծանօթ, «Ինդիանան», ասես, անտեսուած ու մերժուած բոլորից՝ յանիրաւի մոռացութեան տրուեց։ Մինչդեռ սա Զուխաճեանի լաւագոյն ստեղծագործութիւններից է, նրա հասուն շրջանի կատարեալ գործերից։ Սրանում եւս կոմպոզիտորի դրամատիկական օժտուածութիւնը դրսեւորուեց ողջ կատարելութեամբ։ Ստեղծելով «Ինդիանան» Զուխաճեանը գնաց այն ճանապարհով, որ հարթել էր «Արշակում» եւ կոմիկական օպերաներում. զարգացած անսամբլներ,

²⁹ ՄՈՒՐԱԴԵԱՆ Մ., «Ինդիանա» օպերայի կլաւրի մասին, էջ 32։ ՄՈՒՐԱԴԵԱՆ Մ., Ուրուգիժ արեւմտահայ երաժշտութեան պատմութեան, էջ 167։

ծաւալուն մասսայական տեսարաններ, բալետային տեսարան: «Ինդիանայով» կոմպոզիտորը յստակ ուղիներ է նախանշում դէպի «Զեմիրէ»: այստեղ հանդէս եկած կերպարներն ու իրավիճակներն իրենց այլազան դրսեւորումն ու շարունակութիւնն էին գտնելու «Զեմիրէում»:

Օպերան գրուած է թուրքերէն, բաղկացած է երեք գործողութիւնից, 15 համարից:

Անսպառ է օպերայի մեղեդիական հարստութիւնը: Մեղեդայնութեամբ են յագեցած անգամ ասերգերը: Զուխանճեանը վարպետօրէն է բնութագրում սեփական երաժշտական լեզուով օժտուած իր հերոսներին. նրանցից իւրաքանչիւրն անհատականացուած է՝ սրանք վառ գծագրուած բնաւորութիւններ են եւ ունեն ցայտուն բնութագրեր. մի կողմից՝ ընդհանրացուած, միւս կողմից՝ որոշակի հոգեկան առանձնայատկութիւնների մարմնաւորողներ:

Բազմակողմանիօրէն է ներկայացուած ժողովուրդը. դրա վկայութիւնն են առատօրէն հանդիպող խմբերգային տեսարանները: Նշանակալի է մասսայական տեսարանների դերը. խմբերգերը կտրուած չեն գործողութիւնից, այլ օրգանապէս ներգրուում են օպերայի դրամատուրգիայում: Մաւալուն խմբերգային տեսարանները բացայայտում են ժողովրդի ընդհանրացուած կերպարը: Շարունակելով իր օպերային դրամատուրգիայի աւանդոյթները, կոմպոզիտորն օպերան սկսում եւ աւարտում է խմբերգային տեսարաններով, դրանց ինքնուրոյն նշանակութեամբ օժտում կենտրոնական գործողութիւններում: Աւելին՝ ինչպէս «Քէօսէ Քեհեայում», «Ինդիանայում» եւս երգչախումբը տեղ է գտել օպերայի նուագախմբային Պրելիւդում՝ նկատի ունենք Պրելիւդի երկրորդ բաժինը՝ սոպրանօների Es-dur խմբերգը: Երգչախումբը թէ՛ ակտիւ մասնակցում է օպերայում ծաւալուող իրադարձութիւններին եւ թէ՛ նպաստում գլխաւոր հերոսների հոգեվիճակների բացայայտմանը: Այսպէս՝ գլխաւոր հերոսների երաժշտական բնութագրերում կոմպոզիտորը ներգրաւում է երգչախմբին (կանանց եւ խառը) թէ՛ մենակատար համարներում (Վահիւռի³⁰ N 2 քառեակները առաջին գործողութիւնից, Մի-

30

Ըստ Մ. Մուրադեանի՝ «տեղի է ունենում աղջկայ մօր՝ Վահեայի հանդիպումը հարուստ փեսացու Նաթանի հետ, որի ընթացքում Վահեան հանգըստացնում է նրան – հատաացնում, թէ՛ նա կը հասնի իր մուրադին, – վարունան կը դառնայ նրա կինը» (տե՛ս ՄՈՒՐԱՎԵԱՆ Մ., «Ինդիանա»

քալէի N 11 ռոմանսը երրորդ գործողութիւնից), թէ՛ անսամբըլներում (Միքայէի, Բագաւենի եւ Վահիւուի N 9 արիոն ու Վահիւուի, Վարունայի, Միքայէի եւ Կովիդանի N 10 կուարտետն առաջին գործողութիւնից), թէ՛ առանձին խմբերգային տեսարաններում եւ թէ՛ Ֆինալներում՝ օպերայի կուլմինացիայում եւ հանգուցալուծման ժամանակ:

Օպերայում նշանակալի տեղ են զբաղում անսամբըլները, որոնք բացայայտում են հերոսների երաժշտական կերպարները, նրանց փոխյարաբերութիւններն ու բախումները: Այսպէս՝ օպերայի գլխաւոր հերոսներն ունեն մենակատար մէկական համարներ՝ Վահիւուի N 2 քառեակները եւ Վարունայի N 4 արիան առաջին գործողութիւնից, Բագաւենի N 8 ռոմանսը երկրորդ գործողութիւնից եւ Միքայէի N 11 ռոմանսը երրորդ գործողութիւնից, մինչդեռ նրանց կերպարներն օպերայի ընթացքում մեծ զարգացում են ապրում, եւ դա կատարւում է տարրեր հերոսների ու երգչախմբի մասնակցութեամբ անսամբըլներում: Թէեւ օպերան ունի աւանդական համարային կառուցուածք (ինչպէս կոմպոզիտորի մնացած ըոլոր օպերաները), սակայն աւարտուն համարների (արիա, ռոմանս, զուգերգ, արիօ, կուարտետ, դուէտինո, նուագախմբային դրուագներ) կողքին Զուխաճեանը ստեղծում է անընդմէջ զարգացող միջանցիկ տեսարաններ ու գործողութիւններ, ինչը կոմպոզիտորի դրամատուրգիական տաղանդի վկայութիւնն է:

Ահհնար է խօսել «Ինդիանայի» ոճի մասին՝ առանց բնդծելու սիմֆոնիկ նուագախմբի նշանակալի դերն օպերայի դրամատուրգիայում: Նուագախումբը դրամայի լիիրաւ մասնակից է՝ յաճախ նրան է յանձնարարւում գործողութեան մէջ գլխաւոր դերը: Երբեմն նուագախումբը զառնւում է մեղեդու հիմնական

օպերայի կլաիրի մասին, էջ 31): Ոչ թէ Վահեան, այլ՝ Վահիւուն, չէր կարող լինել աղջկայ մայրը՝ թէկուզ Միքայէի, քանի որ նրա երգամասը կլաիրում շարադրուած է բասի բանալիում, հետեւաբար այդ հերոսը կին լինել չէր կարող: Իրականում Վահիւուն իմաստուն անձնաւորութիւն է, որը մեծ յարգանք է վայելում բոլորի կողմից: Նա կարեւոր դեր է կատարում իրադարձութիւնների յետագայ ծաւալման գործում եւ պատահական չէ, որ հերոսի երաժշտական կերպարն ունկնդրին առաջին անգամ ներկայանում է Բագաւենից ու Միքայէից անմիջապէս հետ, երգչախմբի հետ տեսարանում. չէ՞ որ նա մեծ հեղինակութիւն է: Վահիւուի կերպարն, ասես, կանխադուշակում է էրուդիայի կերպարը՝ «Զեմիրէից»։ Նա նույնպէս սիրահարների հովանաւորն էր եւ աջակցում էր էլսանթուրին ու Զեմիրէին:

կրողը: Նուագախմբի միջոցով է Չուխաճեանը տալիս հերոսների եւ իրավիճակների վառ բնութագրերը: Թէեւ նուագախումբը հիմնականում նուագակցում է հերոսների եւ երգչախմբի երգամասը՝ դառնալով վերջիններիս համար տոնայնական հարմոնիկ հէնք, «Նկարագրում» բեմական իրավիճակները, սակայն օպերայում, ինչպէս եւ Չուխաճեանի միւս օպերաներում էր, առկայ են ինքնուրոյն նուագախմբային համարներ: Դրանք են՝

1. Պրելիւդը, որը պայմանականօրէն ստորաբաժանում է երկու մասի՝ նուագախմբային եւ խմբերգային³¹, ընդ որում, նուագախմբային հատուածի թեմատիկ նիւթն ամբողջութեամբ վերցուած է օպերայից³²:

Երկրորդ գործողութեան պրելիւդը, որտեղ հնչում է հայրենիքին թեման՝ առաջին եւ երկրորդ գործողութիւնների ֆինալների a-moll վալս-խմբերգը.

Երրորդ գործողութեան նուագախմբային ինտրոդուկցիան՝ կառուցուած N 11 խմբերգի թեմայի վրայ.

Երրորդ գործողութիւնից N 15 Քայլերգը՝ օպերայի միակ բալետային տեսարանը.

Նուագախմբային մուտքերը, որոնք ստեղծում են տուեալ տեսարանի հոգեբանական մթնոլորտն ու տոնայնապէս, երբեմն էլ՝ թեմատիկօրէն նախապատրաստում դրանք:

«Ինդիանայի» երաժշտական լեզուի արտայայտչականութեան կարեւոր գործօններից է հարմոնիան, որը նշանակալի դեր ունի երաժշտական կերպարների բացայայտման գործում: Չուխաճեանը յենում է եւրոպական մաժոր եւ մինոր ձայնակարգային համակարգերի վրայ: Իր արեւելեան հերոսների երաժշտական կերպարների առաւել դիպուկ վերարտադրման համար կոմպոզիտորը լայնօրէն կիրառում է համապատասխան արտայայտչամիջոցներ՝ հարմոնիկ եւ կրկնակի հարմոնիկ միներներ՝

³¹ Սա երկրորդ դէպքն է Չուխաճեանի երաժշտական թատրոնում (առաջինը՝ «Քէօսէ Քեհեայում»), երբ օպերայի նուագախմբային նախերգանքը բաղկացած է երկու՝ նուագախմբային եւ խմբերգային բաժիններից:

³² «Քէօսէ Քեհեայի» Պրելիւդի նուագախմբային բաժնի թեմատիկ նիւթը նոյնպէս ամբողջութեամբ վերցուած է օպերայից, սակայն ընդհանրութիւն չկայ Պրելիւդի նուագախմբային եւ խմբերգային բաժինների միջեւ: Ի տարբերութիւն «Քէօսէ Քեհեայի»՝ «Ինդիանայի» Պրելիւդի խմբերգի մեղեդին աճում է նուագախմբային հատուածի թեմատիկ կորիզից:

ընդգծուած մեծացրած սեկունդաներով: Այսպէս՝ կրկնակի հարմոնիկ a-moll-ում են գրուած Վահուուի N 2 քառեակները եւ N 9 տեսարանի եզրափակիչ խմբերգը, իսկ կրկնակի հարմոնիկ d-moll-ում՝ N 13 խմբերգն ու Քայլերգի առաջին էպիզոդը: Հարմոնիկ a-moll-ը հանդէս է գալիս Պրելիւզում, N 5 Ֆինալում՝ Վարունայի եւ Վահուուի երգամասերում, N 1 տեսարանի պահակների խմբերգում, Բազաւենի, Միքայէի ու Վահուուի N 9 անսամբլում: N 1 տեսարանի Միքայէի ու Բազաւենի անսամբլում, Վահուուի N 5 կանտիլենայում եւ N 14 խմբերգում հարմոնիկ g-moll-ն է, իսկ Բազաւենի N 8 ռոմանսում՝ հարմոնիկ c-moll-ը:

Նախորդ օպերաների պէս, այստեղ եւս երաժշտական լեզուն առանձնանում է պարայնութեամբ. ի մասնաւորի՝ վալսի ռիթմերը ներթափանցում են հերոսների (Նաթանի երգը առաջին գործողութեան N 5 Ֆինալից, Բազաւենի N 8 ռոմանսը երկրորդ գործողութիւնից) եւ երգչախմբի երգամասեր: Աւելին՝ հայրենիքի թեման, որն անցնում է նուազախմբում (երկրորդ գործողութեան պրելիւզ), երգչախմբի եւ բոլոր գործող անձանց՝ Միքայէի, Վարունայի, Բազաւենի, Նաթանի, Վահուուի եւ Կովիղանի երգամասերում (առաջին եւ երրորդ գործողութեան Ֆինալներ) եւ դրանով էլ աւարտւում է օպերան՝ նոյնպէս վալս է: Ուշադրաւ է օպերայի տոնայնական կառուցուածքը: Զուխաներ կիրառում՝ համանուն տոնայնութիւնների համադրման վրայ խարսխուած ձայնակարգային զարտուղութիւններ, որոնք բնութագրում են այս կամ այն հերոսին:

N 11, Միքայէի ռոմանսը՝ c-moll – E-dur, N 13, Գանդէսին փառաբանող խմբերգի Largo հատուածը՝ g-moll – G-dur.

զուգահեռ տոնայնութիւններ, որոնք կազմում են որեւէ տեսարանի որեւէ բաժնի տոնայնական կառուցուածքը՝

N 9 տեսարանի եզրափակիչ կանանց խմբերգը՝ a-moll – C-dur, N 10 Ֆինալի b-moll անսամբլը՝ b-moll – Des-dur – b-moll.

որոշ դէպքերում տեսարանի կամ հերոսի երաժշտական բնութագրի տոնայնական կառուցուածքում ընդգրկւում են միաժամանակ զուգահեռ եւ համանուն կամ էլ՝ զուգահեռ եւ տէրջիային յարաբերակցութեան տոնայնութիւնները:

N 1 տեսարանից Միքայէի եւ Բազաւենի անսամբլում՝ g-moll – B-dur – g-moll – G-dur – g-moll, N 1 տեսարանից Վահուուի քառեակները՝ g-moll – B-dur – G-dur.

մաժոր տոնայնութիւնների տերցիային համադրումներ՝

N 1 խմբերգ - e-moll - E-dur - G-dur - E-dur - C-dur - G-dur - E-dur, N 7 Բազաւենի եւ Վահիուի զուգերգի առաջին եւ երկրորդ բաժինները՝ G-dur - B-dur, N 13 Քայլերգ՝ D-dur - d-moll կրկ. հարմ - D-dur - B-dur - D-dur.

տոնայնութիւնների սեկունդային յարաբերակցութիւններ՝

Երկրորդ գործողութեան սկիզբը՝ a-moll, աւարտը b-moll, Երկրորդ գործողութեան պրելիւզի աւարտը՝ a-moll, N 6 տեսարանի սկիզբը՝ h-moll,

N 10 Ֆինալի սկիզբը՝ a-moll, աւարտը՝ b-moll.

Քրոմատիկ կիսատոնային յարաբերակցութիւն՝

Պրելիւզն սկսւում է E-dur-ում եւ աւարտւում Es-dur-ում:

Երաժշտական դրամատուրգիայի ամբողջականութիւնն ապահովելու նպատակով, իր օպերային դրամատուրգիայի սկզբունքներին հաւատարիմ, Չուխաճեանն «Ինդիանայում» եւս տարածութեան վրայ ստեղծում է լադատոնայնական ու թեմատիկ կամուրջներ, իսկ միջանցիկ զարգացման անընդհատութիւնն ու մի դրուագից միւսը ճկուն անցումները միտուած են օպերայի ձեւի միասնականութեան ամրապնդմանը:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐԵԱՆ

The Mystery of "Indiana" by Dikran Tchouhadjian

ANNA ASATYRAN

(summary)

One of the greatest mysteries of Dikran Tchouhadjian's life and creative work is the opera "Indiana". The libretto is based on a work by the Turkish author, A. Hamid. "The Indian Lady", was written by Hovsep Yasytchian.

"Indiana" was the author's debut in the genre of patriotic operas. It stands out among the other works of the composer due to its unusual history. Unlike his other operas, "Indiana" was staged neither during the composer's lifetime, nor after his death. Moreover, "Indiana" was ignored by all and was destined to oblivion. Nonetheless, the opera is one of the best and complete works of the composer.

The opera is in three acts and the libretto was translated into Armenian by the poet Anahit Poghikyan-Darbinyan.

This paper seeks to pursue the fate of the manuscript of "Indiana" based on archival materials. Due to the efforts of the Armenian born Turkish composer, pianist, conductor and stateswoman, Sirvard Garamanoukian, the opera score and original clavier manuscripts were housed in the archives of Dikran Tchouhadjian, in the Museum of Art and Literature – Yeghishe Charents, in Yerevan, in 1972.

It has been implied that the opera was written in the mid 1870's instead of the formerly suggested 1890's. The study of the author's manuscripts of "Indiana" has allowed us to distinguish the main peculiarities of the opera in terms of its performance, style and musical language.